ՆՈՐ-ԴԱՐ

№ 80 ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ 26 Մայիսի 1889 Ուրբաթ 26 Մայիսի ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 80

Տարեկան 10 ռուբլի, վեց ամսոյ՝ 6 ռուբլի, երեք ամսոյ՝ 3 ր. 50 կ., ամսոյ՝ 1 ր., հատով 5 կոպեկ։
Բաժանորդ դառնում են ԹԻՖԼԻՍՈՒՄ միմիայն խմբագրատանը։

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն-օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բաժին 2 կ., բնկլամների համար կրկնապատիկ

Խմբագրատան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

Լրագրի բաժանորդագրութիւնը շարունակւում է.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆԵՐ

Յունվարի 1-ից	10 ր. — կ.	Յուլիսի 1-ից	6 ր. — կ.
Փետրվարի 1-ից	9 » — »	Օգոստոսի 1-ից	5 » 25 »
Մարտի 1-ից	8 » 50 »	Սեպտեմբերի 1-ից	4 » 50 »
Ապրիլի 1-ից	8 » — »	Հոկտեմբերի 1-ից	3 » 50 »
Մայիսի 1-ից	7 » 25 »	Նոյեմբերի 1-ից	2 » 50 »
Յունիսի 1-ից	6 » 50 »	Դեկտեմբերի 1-ից	1 » 50 »

Եւրոպա, Թիւրքիա և այլ հեռաւոր երկիրներ տարեկան գինը՝ 30 ֆրանկ, վեց ամսականը՝ 20 ֆրանկ։

Խմբագրատունը գտնւում է Բարօնսկայա փողոցում, պօստ-հեռագրատան դիմաց, տ. № 12.

Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты „НОРЪ-ДАРЪ“ կամ Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

Ա Զ Գ

Խմբագրութիւնս խնդրում է արտաքսահմանի այն բաժանորդներից, որոնք ներկայ և անցեալ տարւայ բաժանորդագինը չեն վճարել, շտապեն ուղարկելու մեզ իրենց վրայ մնացած ապառիկները։ Միևնոյնը խնդրում ենք և մեր երկրի և Ռուսիայի այն բաժանորդներից, որոնք դեռ չեն վճարել իրենց պարտքը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Քաղաքական ընդհանուր դրութիւն։
Հեռագրեր։
Քրոնիկոն.—Լուրեր։
Թղթակցութիւններ.—Սղնախ։ Նոմակ Ամերիկայից.—Ռօսթ։
Քաղաքական.—Քաղաքական լուրեր։
Խառն լուրեր։
Երեկոյեան հեռագիրներ։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 25 մայիսի 1889

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹԻՒՆԻՑ

Եւրոպական մեծ ազգերի մի-մեանց հետ պահպանած յարաբերութիւնները կամ որ միևնոյնն է, ընդհանուր քաղաքական դրութիւնն այսօր նոյն վիճակումն է, ինչ որ էր սրանից մեկ կամ երկու տարի առաջ։

Եւրոպական պատերազմի վտանգը առաջացնող խնդիրներից ոչ մեկը դեռ մինչև օրս իւր լուծումը չէ ստացել. Բալկանեան, աւելի որոշ ասած, բօլղարական գործերը նոյն անորոշ դրութեան մէջ են, ինչ դրութեան մէջ էին պրինց Ալէքսանդրի Բօլղարիայի իշխանական գահից հրաժարուելուց յետոյ։ Մինչև այսօր Կօբուրգեան պրինց Ֆերդինանդին և ոչ մեկ պետութիւն չէ ճանաչել Բօլղարիայի իշխան. այդ պրինցի և ընդհանրապէս բօլղարական գործերի վերաբերութեամբ բոլոր մեծ պետութիւնները դիտողի դերք են բռնել։

Էական կողմից ընդհանուր քաղաքական դրութիւնը ոչինչ փոխութիւն չը կրելով, միմիայն իւր գոյնը, եթէ այդպէս կարելի է ասել, ենթարկւել է փոփոխութեան։ Քաղաքական ընդհանուր դրութեան գոյնը այժմ գոյնից զուրկ լինելն է։ Այժմ, ինչպէս անցեալ և նախընթաց տարիները, քաղաքական ընդհանուր դրութիւնը որոշւում է լատինական այս առածով. si vis pacem, para bellum, այսինքն՝ եթէ խաղաղութիւնը պահպանել ես ուզում, պատերազմի պատրաստուիր։ Այդ առածին հետևում են մինչև օրս եւրոպական մեծ պետութիւնները և ամեն կերպ զինւում են ահագին գումարներ ծախսելով, որպէս զի, իրենց ասելով, ընդհանուր խաղաղութիւնը պահպանեն. և ընդհանուր խաղաղութիւնը մինչև օրս աջողուել է պահպանել։ Այդպիսով խաղաղութեան հրեշտակը նստած է սրի ծայրին. բաւական է, որ սուրը մի փոքր յետ քաշեն կամ շարժեն, և խաղաղութեան հրեշտակը խոցոտուած վայր պիտի ընկնի և պատերազմի Փուրիան իւր սև թևերով թռչէ և ամեն կողմը մահ և սարսափ տարածէ...։

Միմիայն Անգլիան էր, որ վերը յիշած լատինական առածին չէր հետևում և խաղաղութիւնը պահպանելու համար զինուելու պէտքը չէր զգում։ Այդ բանին օգնում էր և Անգլիայի կղզեացած դրութիւնը, որին անմիջապէս ոչ մի դրացի չէ սպառնում, քանի որ նա շրջապատուած է ծովերով։

Որ մեր քաղաքական ընդհանուր դրութիւնը միևնոյն է մնացել—այդ ապացուցանում է Անգլիան, ըստ որում այժմ նա էլ է սկսել մեծ չափով զինուել, բայց ոչ թէ ընդհանուր խաղաղութիւնը պահպանելու նպատակով, այլ ընդհանուր խառնակութեան, պատերազմի ժամանակ իւր բաժինն ստանալու համար։

Անգլիական առաջին մինիստր՝ լօրդ Սալսբիւրին պարզ և հասկանալի լեզուով բացատրեց վերջերս լօրդերի ժողովին պատերազմական միջոցների համար 200 միլիօն րուբլի ծախսելու անհրաժեշտութիւնը։

Այդ 200 միլիօն ահագին գումարը առաջարկւում է ծախսել պատերազմական նոր նաւեր շինելու վրայ, այնպէս որ մի քանի տարուց յետոյ, երբ մտադրուած նաւերը պատրաստ կը լինին, Անգլիական ծովային ոյժերը պիտի կարողանան աջողութեամբ պատերազմել եւրոպական երկու առաջնակարգ պետութիւնների միացրած ծովային ոյժերի դէմ։

Ինչպէս պատգամաւորների ժողովը, նոյնպէս և լօրդերի ժողովը որոշեց տալ 200 միլիօն րուբլի անգլիական ծովային ոյժերը վերանորոգելու և ընդարձակելու համար։ Մեզ համար հետաքրքիրը անգլիական կառավարութեան այդ առաջարկութիւնը չէ, որ անում է նա պարլամէնտին, այլ այն պատճառաբանութիւնը, որով կառավարութեան աջողւում է խնայող և գործնական մի ազգի պարլամէնտից, ինչպիսին է անգլիական ազգը, ստանալ խաղաղութեան ժամանակ պատերազմական միջոցների համար այդպիսի խոշոր գումար։

Լօրդ Սալսբիւրին իւր առաջարկութիւնը պատճառաբանում է այսպէս.—

«Բոլոր ազգերը բազմանում են յարձակուելու և պաշտպանուելու միջոցները։ Մենք սպասկինք մինչև վերջին վայրկեանը, գուցէ վերջին վայրկեանից էլ աւելի, մինչև որ մենք էլ սկսեցինք պատերազմական ծախքեր անելու մէջ հետևել միւս ազգերին։ Այսուհետև էլ սպասել մենք կարող չենք։ Ես չեմ առում, որ պատերազմի վտանգը անխուսափելի է, բայց վտանգը կայ, և նրան դէմ դնելու պարտաւոր ենք»։—

Անգլիական առաջին մինիստրի այս պարզ խօսքերով ամենից լաւ որոշւում է արդի քաղաքական դրութիւնը։ Նա ոչ ոքի չէ սպառնում և պատերազմի էլ եռանդ չէ ցոյց տալիս, բայց համոզեցուցիչ խօսքերով յայտնում է պարլամէնտին, որ ամենքը զինւում են, բայց պատերազմի վտանգը կայ, ուրեմն Անգլիան պէտք է զինուի, ոչ թէ պատերազմի առաջն առնելու, այլ պատերազմի դէպքում իւր շահերը պաշտպանելու համար։

Անգլիական առաջին մինիստրի խօսքերից նոյնպէս պարզ երևում է, որ պատերազմի պատրաստուելով, խաղաղութիւնը չէ ապահովում, այլ պատերազմի վտանգն է աւելացնում։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ի

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԴՈՐՇԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 մայիսի.—Կայսերական արքունիքն այսօր Գատչինօից Նոր-Պետերհօֆ տեղափոխուեց։

Ասում են, որ այսօր Նոր-Պետերհօֆում պէտք է Մեծ Իշ. Դէօրդէյ Ալէքսանդրովէին դէպի «Դեներալ-Ադմիրալ» ֆրագատը ճանապարհ դնեն. Նորին Բարձրութիւնն այդ նաւով Ատլանդեան ովկիանոսն է ուղևորելու։

ԽԱՐԿՈՎ.—Երէկ Պաւլօգրադում քննւում էր հեծելազօրի պահեստի ենթասպայ Սամօյլովի գործը, որ մեղադրւում է Լվով կայարանում զաղաթ սպայ Լեբեդևին սպանելուն համար, որը Սամօյլովին խօսքով և գործով ծանր վիրաւորանքներ էր հասցրել։ Սամօյլովին արդարացրին։

ՊԱՐԻԶ. — Հռոմից ստացուած մասնաւոր տեղեկութիւնները հաստատում են Իտալիայի և Դերմանիայի միջև կապուած պայմանագրի մասին լուրերը։ Այդ պայմանագրի զօրութեամբ իտալական զօրքերը նոյն պայմաններումն է դրւում, որի մէջ գտնւում է բաւարական զօրքը—Հռոմում պէտք է գտնուի գերմանական զինուրական մի դելէգացիութիւն. իտալական դելէգացիան, որ աւելի քիչ հոգուց բաղկացած կը լինի, պիտի գտնուի Բերլինում։ Երկու դելէգացիաների նպատակներն էլ պիտի լինի իտալական և գերմանական բանակների միացումը և նրանց միևնոյն եղանակին վերածելը՝ գերմանական գեներալի հրամանատարութեան ներքոյ։ Այդ պայմանագիրն առանց Աւստրիայի մասնակցութեան է կազմուած։

ԲԵՐԼԻՆ.—Այստեղի քաղաքական և ֆինանսական շրջաններում կուրսի անկումը վերագրում են շահադիտական նպատակներին։ Յիշեալ շրջաններում արտայայտուած մտքերին նայելով, ռուսական կօնվէրսիայի աջողութիւնն ապացոյց է, որ ամենաընդարձակ շրջաններում հաւատում են Ռուսիայի ֆինանսներին։ Յիշեալ շրջանները համաձայն են «Allgemeine Reichscorrespondez»-ի հետ, որը մատնացոյց է անում, թէ գերմանական մամուլը անաչառ և բարեացակամաբար է քննում ռուսական կօնվէրսիային գործառնութիւնները։ Յիշեալ թերթի ասելով, ռուսական տնտեսական քաղաքականութեան նպատակը է ժամանակի ասկոսի նուազումն, ամբողջ ֆինանսական կազմի զօրացումը և տնտեսուածի արդիւնաւոր կերպով գործածումը։ Ռուսիայի ֆինանսական պայմանների զօրացումը նոր զօրաւոր գործօն է եւրոպական խաղաղութեան պահպանութեան համար։

(Երեկ. հեռ. չորրորդ երեսում)

ՔՐՈՆԻԿՈՆ

Կովկասի կառավարչապետ իշ. Դոնդուկով-Կօրսակովը երեքշաբթի, մայիսի 24-ին, երեկոյեան Երևանից վերադառնալով Թիֆլիս ժամանեց։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են «Նոր-Դար»-ի 69 համարում գրուած լուրի առթիւ, թէ ուսումնարանի աշակերտներն ոչ թէ «քէֆի» են գնացել, այլ աշակերտական զբօսանքի, որ մանկավարժական պահանջ է։ Իսկ տեղացած կարկուտը ոչ թէ ոչինչ վնաս չէ տուել, այլ բաւական վնասել է ծառերին։

—

ԴԵՐԲԵՆԴԻՑ.—Անձրև չկայ. ցանքսերը դրեթէ մեծ կարօտութիւն ունին անձրևի, ապա թէ ոչ, դարձեալ թանկութիւն պիտի լինի։ Ռուսիայից մեծ քանակութեամբ ալիւր է գալիս, թէև դառն է. գառներում մեծ պակասութիւն է հայի և եկած ալիւրը վաճառւում է որքան և լինի. լեզգիները գրեթէ ամբողջ չարաթում ծովի ափին սպասում են, որ չոգենաւից ալիւր դուրս գայ և գնեն։ Այդ լեռներն այժմ պարզ երևում է, որ կիսով չափ ցրտահար են եղած «արաչումայ» ասուած հիւանդութիւնից և, ինչպէս երևում է, բերքը չատ քիչ պիտի լինի։ Չնայած այսպիսի ծանրութիւններին, չոգենաւերի գրէհներն էլ չափազանց բարձրացել են. անցեալ տարուանից այժմ իւրաքանչիւր տակառին 5 ր. աւել են պահանջում. ճարահատեալ Ռուսիա գինի տանողները հասարակ նաւերով են ուղարկում. Ղուբայի ճանապարհի վրայ, Սամուր ասուած գետի այն կողմը, խումբ խումբ չրջում են աւազակները. ամեն օր կողոպտելու, ամեն չարաթ սպանութեան դէպքեր են լսւում։

—

ԼՕՌՈՒՑ.—Վարուցանքը հազիւ վերջացաւ։ Շարունակ տեղացող անձրևներն արգելք եղան ցանքի չուտ վերջացնելուն։ Ապրիլի սկզբից մինչև օրս (մայիսի 23) չարունակ անձրևներ են տեղում, որոնք ահագին վնաս տուեցին ցանքին։ Գետին ձգած սերմի մեծ մասն այս անձրևներից կը փտէն՝ «չուր կը կորչէն»։ Իսկ դուրս եկածն էլ և «դև» կը ձգի և նուազ կը լինի։ Ինչ անկ խեղճ գիւղացին։ Իւր ամբողջ սարսւայ յոյսը կորչում է։ «Աչխատում ա, աչխատում ու վերջը Տաշէն նստում իւր աչխատածից»։ Շատ անձրևներից Լօռուայ ձորերում սարսափելի զաւակներ են լինում։ Ահագին ժայռեր գլորւում են իրենց տեղերից դէպի անդունդները, ահագին հողակոյտեր պոկւում են սարերի լանջերից։

—Գարունը գալուն պէս աւազակները կրկին յայտնուեցան։ Անցեալները Ղազախի և Լօռու սահմանում լոյս էին ընկել մի խումբ աւազակներ, որ բաւական էլ վնաս տուեցին։ Մեր պրիս-

ժողովեցնել նրանց մասին։—Ա. ՍԱՐԳՍՅԱՆՑ։

—

Մյուղրիի գավառում։—Մեր գավառում վերջին ժամանակներս շատ են գողությունները և ավազակությունները։ Ասում են, թե Ղարաբաղի կողմերից եկած մի ավազակախումբ է գործում։ Ավազակները գիշերները մտնում են գյուղերը, կողոպտում են և գնում։ Ամենից շատ տուժել է Ղարաքիլիսա գյուղը։ Ավազակները մի քանի անգամ մտել են այդ գյուղը, կողոպտել են և գնացել։ Ամենավերջին անգամ նրանք մտել են գյուղը հոկտեմբերի 24-ի գիշերը։ Ավազակները եղել են 25 հոգի։ Նրանք մտել են գյուղը, կողոպտել են և գնացել։ Ավազակները գնացել են Ղարաքիլիսայից 2 վերստ հեռու գտնվող Ղարաքիլիսա գյուղը։ Այդ գյուղում նրանք կողոպտել են 3 տուն

ՀՈԿՈՏՈՆՈՑ

* * *

Աղոյժատուի դպրեվանեանի սեռ դպիր մի տարի Մ[illegible] 18 տարի դպրեվանից հետո դարձել է ազգային գործիչ, հռչակավոր հրապարակագիր, ազգային մեծ բարերար, ազգային ամենամեծ հիմնարկութեան՝ Ներսիսեան դպրեվանքի հոգաբարձութեան նախագահ, Ռուսաստանի պետական խորհրդի անդամ, Ռուսաստանի ամենահարուստ մարդկանցից մէկը, Ռուսաստանի ամենաազդեցիկ անձերից մէկը, Ռուսաստանի ամենաազդեցիկ թերթի՝ «Մոսկովսկիյ Վեդոմոստի» հրատարակիչ-խմբագիրը, Ռուսաստանի ամենամեծ տպագրական ձեռնարկութեան տէր եւ այլն եւ այլն։ Ահա թէ ինչ է գրում նրա մասին «Նովոյե Վրեմյա» թերթի Մոսկուայի թղթակիցը։

Մոսկուայի գաւառական դատարանի նախագահ Ալեքսանդր Ֆեդորովիչ Կոնի (Գ. Wachington) մահացել է Փետրուարի 17-ին, 18/30-ին, վերջին 14 տարին նա ապրում էր Ֆրանսիայի հարաւում, Նիցցա քաղաքում, ուր եւ թաղուած է։ Նրա մահուան լուրը ստացուեց Մոսկուայում մեծ ցաւակցութեամբ։ Ամենքը գիտէին, որ Կոնի առողջութիւնը վատ է, որ նա ծանր հիւանդ է, բայց ոչ ոք չէր սպասում, որ նա այդքան շուտ կը մեռնի։ Նա ծնուել է 1837 թ. Նիցցա է գնացել 1887 թ. Ամբողջ 50 տարի նա ծառայել է դատական ասպարէզում։ Նա ամենից առաջ եղել է Մոսկուայի դատական պալատի նախագահ, ապա Սենատի դատաւոր, ապա Սենատի նախագահ։ Նա ունեցել է մեծ համբաւ, որպէս ազնիւ, անկաշառ դատաւոր։ Նրա անունը կապուած է Ռուսաստանի դատական բարեկարգութեան հետ։ Նա ամենից առաջ ներկայացուցիչն էր այն սերնդի, որ ստեղծեց Ռուսաստանի նոր դատական կարգերը

բիլլ» Վիճաբանութիւնների միջոցին մարքիզ Սալսբիւրին ասաց, թէ 1894 թուին արդէն իրագործուած կը լինի նաւատորմիղը զօրացնելու նախագիծը, անգլիական նաւատորմիղը միշտ աւելի կը լինի, քան եւրոպական ո և է երկու պետութիւններ միասին վերառած, բացի Ֆրանսիայի և Գերմանիայի դաշնակցութեան դիպուածից, որոնք միասին կարող են 88 ռազմանաւ դուրս հանել անգլիական 77 ռազմանաւի դէմ։ Սակայն այդ դաշնակցութիւնն մի այնքան հաւանական բան չէ երևում։ Մարքիզ Սալսբիւրին չէ կասկածում, որ եւրոպական պետութիւնները բոլորն էլ լիջօրէն ցանկանում են խոյս տալ պատերազմից, բայց հրաչք դեռ այնքան պակաս վստահութեամբ չէր կարելի ասել, որ հինգ տարի կառավարութիւններն նոյն քաղաքականութեան կը հետևեն, ինչ որ այժմ։ Այդ ժամանակի անորոշ դրութիւնն ի նկատի ունենալով, երբ եւրոպական բոլոր պետութիւններն էլ պատերազմի են պատրաստւում, պէտք է Անգլիան էլ պատրաստ լինի պատերազմի։ Նախապատրաստութիւնների պատճառով առաջացած ֆինանսական ճնշումներն արդէն ինքն ըստ ինքեան խաղաղութեան միմի սպառնալիքներ են և մի քանի տարի կարող է պատերազմի դրդել։ Բոլոր պետութիւններն էլ յարձակման և պաշտպանութեան միջոցներ են ժողովում։ Անգլիան մինչև վերջին կէսը սպասում էր և, գուցէ նոյն իսկ բաց թողնց ժամանակը, մինչև որ վերջապէս վճռից զինման համար ծախսերի մրցում սկսել։ Մարքիզ Սալսբիւրին չէ ասում, որ վտանգն անխուսափելի է, բայց վտանգ կայ և Անգլիան պէտք է միջոցներ գործ դնէ նախազգուշութեան համար։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ. — «Vossische Zeitung»-ին Թէհրանից հաղորդում են, որ բարձն Բէյսերին «Պարսից պետական բանկ» հաստատելու իրաւունք արուելով, նրա գործունէութիւնը գլխաւորապէս ուղղուած կը լինի առ այն, որ մշակէ պարսկական հանքերը։ Ի նկատի ունին էլվենդ լեռները (Համատանի մօտ), ուր գտնւում են ոսկու և արծաթի հարուստ հանքեր։ Իէզդի չրջակայքում (Ֆարսի նահանգ) կան արճճի հարուստ հանքեր։ Նուրմանչիրի չրջանում—պղընձի հանքեր։ Էլբուրսի լեռներում (Խորասանի նահանգ)—երկաթի, պղինձի և արճճի հանքեր։ պարսկական ծովածոցի մօտ—ծծումբ։ Թէհրանի մօտերքը, Էլբուրսի ստորոտում—քարածխի ահագին հանքեր։ Բացի այդ, անգլիական դրամատէրերի ընկերութիւնն արտօնութիւն է ստացել Շուրջկասպեան նահանգների ընկոյզի և ձիթենու անտառների չահագործութեան։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

*** «Paris» թերթը հաղորդում է, թէ երբ Ֆրանսիայի հասարակապետութեան նախագահի վրայ ատրճանակ արձակելու լուրը հասնում է Փիլ Ֆէրրիին, նա ասում է. «Եթէ հասարակապետութեան նախագահի վրայ էլ են ատրճանակ արձակում, ինձ էլ լաւ կարող էին նախագահ ընտրել»։

*** Բելլինի գարնջագործներից մինը իրեն համար մի ատրօրինակ տուն է կառուցել։ Առաւել աչքի է ընկնում տանտիրոջ առանձնասենեակը, որի պատերը, պատուհի փոխարէն, ծածկուած են խիտ ճարպիկութեամբ զարուած... գարնջրի չիչերով։ Բոլոր կահը, նոյն իսկ պատկերների չրջանակները և այլն գարնջրի չչի ձև ունին։

*** Նորագոյն մօդան այն է, որ կանայք իրենց հովանոցը վաճած պահում են իրենց թևի տակ՝ կոթը նեսից դէպի վեր բարձրացրած։ Մի կին փողոցից արագութեամբ անցնելիս, աչքը խփում է մի այդպիսի հովանոցի և աչքը զուրս է գալիս։ Այժմ աչքից զուրկ կինը դատ է սկսել հովանոցի տիրոջ դէմ և իր աչքը գնահատելով 2000 գերմ. մարկ, պահանջում է։ Դատարանը մարդկային աչքի արժէքը գնահատելու համար մասնագէտներ է հրաւիրել։

*** Ցիւրիխի մի լրագիր գտել է, որ Պարիզի հռչակաւոր աչտարակը կառուցանող ինժեներ Էյֆէլը Զուիցերիայի ազատարար Վիլհելմ Տէլլի սերունդից է։

*** Լօնդօնը քանի գնում մեծանում է։ Այժմ նրա բնակիչների թիւը հասնում է 4.500,000-ի։ Ամեն տարի միջին թուով բնակիչների թիւը 50,000-ով աճում է, այնպէս որ, ներկայ դարիս վերջում նրա բնակիչների թիւն այդ հաշուով 5 միլիոն է հասնելու։ Ինս 1603 թուին Լօնդօնը 105,000 բնակիչ ունէր։ Վերջին տասն տարուայ ընթացքում, տների թիւը 20,700-ից հասաւ 32,000-ի։ Անգլիայի մայրաքաղաքի 6 գլխաւոր երկաթուղային գծերով ամեն տարի մօտ 200 միլիոն ուղևորներ են անցնում։

ԵՐԵԿՈՅԵԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(«Հիւսիսային գործակալութիւնից»)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 Մայիսի.—Զինուորական մինիստրը բժշկուելու համար արտասահման է գնում։ Նրա պաշտօնը ժամանակաւորապէս գեներալ Օբրուչեւին է յանձնուած կատարել։

«Journal de St. Pétersbourg»-ը զարմանում է օտար պետութիւնների բօրսաների յուզուելու վրայ՝ ռուսական զինման մասին տարածուած լուրերի պատճառով, չնայելով, որ անդադար կրկնւում էր, թէ Ռուսիայի քաղաքականութիւնը բացառապէս խաղաղասիրական է և ամենից աւելի պէտք է բօրսաներն իմանային, որ ռուսական ֆինանսների մինիստրութեան սկսած մեծ գործառնութիւնների գործագրման միջոցին երբէք Ռուսիայից չէին ստացուել դեպի խաղաղութիւնն եղած հաւատը խախտող լուրեր։ Սրա թէ ինչէ վրդովեցուցիչ լուրերը կարելի է միայն բացատրել արժէգները իջեցնելու ցանկութեամբ։

ՊԵՏԵՐՀՕՖ. — Այսօր առաւօտեան այստեղ եկան ինսպիտուտներում և օրիորդական գիմնազիօններում ոսկեայ և արծաթեայ շքագրամներով աւարտող աշակերտուհիները։ Թագուհի Կայսրուհին իր ձեռքով բաշխում էր շքագրամները։

ՍԵԻԱՍՏՕՊՕԼ.—Մեծ Իշխան Կոնստանտին Նիկօլաևիչը ճեպընթաց գնացքով Պետերբուրգ ուղևորեցաւ։

Խմբագիր-հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

«Նոր-Դար»-ի Օրացոյց.

1889 թ. ք.	Մայիս 31 օր.	ՏՈՉԱ Հայկ. թ.
26	—Ուր. ակ. իր օր յիշ.—Լս. 8. Ն. Տ. յետնո 7. մարերի 19.	
27	—Շր. բ. խմ օր յիշ.—Լս. 9. Ն. Տ. յետնո 8. մարերի 20.	
28	—Կիր. ըմ. ծ օր յիշ.—Լս. 10. Ն. Տ. յետնո 9. մարերի 21։ Հոգեգալուստ։ Եղիական պասի բարեկենդան։ Ար. ծղ. 4 ժ. 20 վ., մուտք 7 ժ. 32 վ.	
29	—Բ. գձ.—Լս. 11. Ն. Տ. յետնո 10 մարերի 22. պաս։	
30	—Դ. գկ.—Լս. 12. Ն. Տ. յետնո 11. մարերի 23. պաս.—Ար. ծղ. 4 ժ. 26 վ. մուտք 7 ժ. 33 վ.	
31	—Ե. գկ.—Լս. 13. Ն. Տ. յետնո 12. մարերի 24. պաս։	
	Յունիս 30 օր.	
1	—Նչ. գկ.—Լս. 14. Ն. Տ. յետնո 13. մարերի 25. պաս.—Լս. լս. Ծն. Ն. Կ. Բ. Մեծ Իշ. Դիմիտրի Կոստանտինովիչ.—Ար. ծղ. 4 ժ. 26 վ., մուտք 6 ժ. 37 վ.	

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ գրավաճառանոցներում և ՇՈՒՇԻ եղբ. Թադեանց գրախանութում վաճառւում են

Կ. Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑԻ

հետևեալ աշխատութիւնները,

1. Ուղեցոյց գործնական գինեգործութեան, պատկերազարդ, 60 կ.
2. Բուսական Աշխարհից անմշակ և մշակուած ծառի կեանքը պատկերներով (տարերք այգեգործութեան) . . . 30 կ.
3. Դլըցէ կընանոց պէնը վեշակը . . . . . 20 կ.
4. Շօշվա-Դալին խէրն ու շառը (Տմբլաչի Խաչան) պատկերով . . . . . 45 կ.
   առանց պատկերի . . . . . 35 կ.
5. Փշրանք I (մանկական) . . . . . 15 կ.
6. Ծխախոտը և իւր վնասները . . . . . 10 կ.

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ

1. Ոգելից ըմպելիների վնասակարութիւնը։
2. Ուղեցոյց գործնական շերամապահութեան (ընդարձակ ձեռնարկ)։
3. Վազի մշակութիւնը Դերբէնդում։
4. Վազը և իւր մշակութիւնը (ընդարձակ ձեռնարկ այգեգործութեան)։

15—5

ՌՅԻՒՀԿ ՄԻՍԿՔ ԸՐԱՄԲԵՆՑ

ՍԱԼԻՄՆԻՑ ԷՋՄԻԱՆՓԻՆ

Նկարագիր

ՈՒԽՏԱՒՈՐ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ

Բազմաթիւ փոխառութիւններով

Գինն է 50 կոպէկ

Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան։ (Ս.) Ռ—77

ՅՈՎՍԷՓ ԲՈՒՂԴԱՆԵԱՆ ՊՕՊՈՎԸ ԵՒ ԱԼԷՔՍԱՆԴՐԱ ՍԱՐԴՍԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑԸ սրտի խորին վշտով յայտնում են իրենց ազգականներին և ծանօթներին առաջինն իւր քրոջ և երկրորդն իւր մօր՝ կապիտանի կին ՍՈՖԻԱ ԲՈՒՂԴԱՆԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՐՈՒՐԵԱՆ-ԵՐԵՒԱՆՑԵԱՆՑԻ մահուան լուրը և խընդրում են շնորհ բերել յուղարկաւորութեան, որ կը կատարուի Պրիկազնայա փողոց, Թալիբեանցի տնից դէպի Սուրբ Նշանի եկեղեցին, շաբաթ օրը, մայիսի 27-ին, առաւօտեան ժամը 10-ին։

Հոգեհանգիստը կը կատարուի ուրբաթ, մայիսի 26-ին, երեկոյեան ժամը 7-ին։

1—1

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ „ԱՐԱՔՍ“-Ը

«Արաքս պատկերազարդ հանդիսի առաջին գիրքը շքեղ հրատարակութեամբ 15 տպագրական թերթից և 12 գեղեցիկ նկարներով կուղարկուի բաժանորդներին մայիսի 20-ին։ Ուշ հրատարակելու պատճառը գրքում։

Բովանդակութիւնն է. Հասարակական խնդիրներ։—Բանաստեղծութիւններ։—Տեղագրութիւն. Եւդոկիա.—Հռոմկլայ.—Մարաշու Հաճընոյ լեզուն։—Այնթապի հին սովորութիւններ. նախապաշարմունք.—Կիլիկիոյ ժողովրդական աղօթքներ։—

Կենսագրութիւններ. Կարապետ վարդապետ Շահնազարեանց.—Խելօք Կարապետ.—Նիկողայոս Ելիսկոպոս.—Գերովբէ Պատկանեան.—Գաբրիէլ աւագ քահանայ Պատկանեան։—Բանասիրական. Թատրոնական յիշողութիւններ.—Հայոց մեծ գաղթականութիւնը ԺԲ դարում. Մատենագրական. Ասիա Նորավէպը, ամբողջ։—Մատենախօսութիւն. Ռուսահայ բառարան. Քրիստոնեայ Հայաստան և սրա գրականութիւնը. Արարատեան լեռներում։—Ազգային յիշատակարան։ Այլ և այլք։

Պաշէներ. Կատարեալ վարդապետ Շահնազարեանց.—Խելօք Կարապետ։—Նիկողայոս Ելիսկոպոս։—Գերովբէ Պատկանեան. Գաբրիէլ աւագ քահանայ Պատկանեան.—Հայկական վաղեմի պատկեր սուրբ Աստուածածնի։ Երեք խումբեր Մշի հայկական տիպերից. երկուսը աղջիկներ, մէկը՝ տղայք։ Նկարներ. սուրբ Էջմիածնի վանք.—Եւդոկիոյ տեսարանը.—Հայոց առաջին եկեղեցին Լեհաստանում։

«Արաքսի» բաժանորդագինն է, ինչպէս առաջ, 3 րուբլի. իւրաքանչիւր գրքի գինն է 2 ր. 50 կոպէկ։

Անցեալ տարուայ գրքերը սպառուած են։

Ցանկացողները դիմելու են միայն Պետերբուրգ այս հասցէով. Петербургъ. Симеону Гуламирянцу.

ՅՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ 1889 Թ.

Թիֆլիս քաղաքում, Սիօնի եկեղեցու մօտ, Գէորգ աղի քարվանսարայում, ԲԱՑՈՒԱԾ Է ՍԵՊՀԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՄԻՋ ԿՇՌՈՒԱԾ ԹԻՑԻ

առևտրական տան

ՍԵՐԳԷՅ ՎԱՍԻԼԵՒԻՉ ՊԵՐԼՈՎԻ, ՄՈՍԿՈՒԱՑԻՑ

3—3

ԿՕՅԼԲԻՐԻ ՍԱԼՍԱՊԱՐԻԼԵԱՆ ԷՍՍԵՆՑԻԱ

ESSENCE DE SALSEPAREILLE COLBERT

Պահանջել, որ նշանաթղթի վրայ լինի կարմիր գոյնով ստորագրութիւն։

Պահեստը գտնւում է թիֆլիսի բոլոր գլխաւոր դեղատներում։

Պարիզում—Phcie Rogé, 9, rue du quatre Septembre.

(М.) 8—7

ՆԵՍՏԼԷԻ ԿԱԹՆԱՅԻՆ ԱԼԻՒՐ. գինն է 1 ր. 15 կ.

Փոքր երեխաներին սնուցանելու համար

Մայրական կաթի տեղ գործածելու համար մինչև այժմ հնարուած մեջոցներից ամենալաւն է։ Դա սննդաբար է և դիւրամարս, և ամեն մի տղայ սիրով ընդունում է։

ՈՐՊԷՍ ԿԵՐԱԿՈՒՐ առաջարկում եմ և ԹՈՒՅԼ ՍՏԱՄՈՒՔՍ ունեցող ՀԱՍԱԿԱՒՈՐՆԵՐԻՆ

ՆԵՍՏԼԷԻ ՅԱՄԱՔԱՑՐԱԾ ԿԱԹ. գինը 85 կ.

Վաճառւում է Թիֆլիսում՝ դեղատնային ապրանքների վաճառման Կովկասեան Ընկերութեան, Ա. Ծուբինեանի, Ա. Պօպովի, Դ. Ա. Պօպովի, Վ. Դրիմիանի և Ռուսիայի բոլոր դեղատներում, դեղավաճառանոցներում և մանրավաճառների մօտ։

ԳԼԽԱՒՈՐ ԴԷՊՕՆ Պետերբուրգ, Կազանսկայա, 3։ ԱԼ. ՎԵՆՑԵԼԻ ՄՕՏ Մօսկուա, Պոկրովկա, Եզորովի տանը.

ԲՈԼՈՐԴ ՈՒՍԻԱՑԻ ՀԱՄԱՐ ՄԻԱԿ ԳՈՐԾԱԿԱԼ Александръ Венцель

Պատիւ ունիմ հասարակութեան հաղորդելու, որ ես պատասխանատու եմ միայն այն տուփերի համար, որոնց վրայ կպած կնիք և Աւէքսանդր Վենցէլի՝ ամբողջ Ռուսիայի համար իմ միակ գործակալի ստորագրութիւնը կայ։

ՀԵՆՐԻԽ ՆԵՍՏԼԻ, ՎԻՎԷՑՈՒՄ (Զուիցերիա)։

(Щ. 10713) 12—4

Дозволено цензурою. г. Тифлисъ, 25-го Мая 1889 г. Տպարան Կաւկազ լրագրի գրատենեակի Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр., д. Читахова